ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- Մերձավան համայնքի 2013թ. ֆոնդային բյուջեն կազմում է 21138600դրամ, երկրորդ կիսամյակի ծախսային մասը կազմել է 1192400դրամ.
- 2013թ. երկրորդ կիսամյակում գյուղապետարանը բնակիչներից ստացել է 44 դիմումներ, որոնք քննարկվել են և ժամանակին տրվել են պատասխաններ: Գյուղապետարանը բնակիչներին տվել է 470 տեղեկանք, ստացվել է 142 պաշտոնական նամակներ, բոլորն էլ քննարկվել և ժամանակին, 122 նամակներով պատասխանվել են, գումարվել է ավագանու 7 նիստեր, ընդունվել է 27 ավագանու որոշումներ, արձակվել է համայնքի ղեկավարի 13 կարգադրություններ և 27 որոշումներ.
- Կատարվել է 6 աճուրդ՝ բնակավայրի նշանակության-խառը կառուցապատման 3, բնակավայրի նշանակության բնակելի կառուցապատման 1, գյուղ նշանակության այլ հողատեսք1, գյուղ նշանակության վարելահողի 1.
- Վարձակալությամբ տրվել է 1 գյուղ նշանակության հողակտոր և 1 շենք-շինություն վարձակալություն:
- Մանկապարտեզի աշխատանքները կոորդինացնելու, ժամանակին ու անթերի կազմակերպելու համար 2013թ, երկրորդ կիսամյակին տրամադրվել է, որպես սուբսիդիա՝ 5388000դրամ /ուղղվել է աշխատավարձի, կոմունալ ծառայությունների, սննդի , նորոգումների և սարքավորումների ձեռք բերմանը/.
- Նախազինակոչային հասակի /1998թ ծնված/ պատանիները ներկայացվել են էջմիածնի զինվորական կոմիսարիատ՝ բժշկական հետազոտման, անմիջական աջակցություն է ցուցաբերվել աշնանային զորակոչին, ապահովվել է զինապարտների ակտիվ մասնակցությունը Հայկական բանակի զորավարժանքներին.
- Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվել է 3145.0 հազար դրամ դրամական օգնություն, Մերձավանցի՝ նորածին 16 երեխաների ծնողներին տրվել է 50000ական դրամ.
- Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոնին փոխանցվել է150000դրամ գումար.
- Ժամանակին կատարվում է երեխաների բժշկական պրոֆիլակտիկ պատվաստումները, հաշմանդամության կարգ ունեցող բնակիչները և 0-7 տարեկան հիվանդ երեխաները ստանում են իրենց անհրաժեշտ, անվճար դեղորայքը.
- Մերձավան համայնքի ֆուտբոլային թիմը մշտապես մասնակցում է հանրապետական, մարզային առաջնություններին, ֆուտբոլի փնջային մրցաշարերին և բազմիցս արժանացել է պատվոգրերի.
- Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան «Մերձավան-98» թիմին Հայաստանի ֆուտբոլի մանկապատանեական Մ-15/Բ/ առաջնությունում առաջին տեղը զբաղեցնելու համար հատկացրել է դիպլոմ:
- ՀՀ Վարչապետ Անդրանիկ Մարգարյանին հուշամրցաշարում 2013թ առաջին տեղը գրավելու համար ստացել են դիպլոմ և գավաթ: Բոլոր միջոցառումների կազմակերպմանը և մասնակիցների տեղափոխմանը աջակցել է գյուղապետարանը.

- Համայնքում գործում է ,,Արեգակ,, վարկավորման ծրագիրը, մասնակիցների թիվը շարունակական ավելանում է, որը համայնքի կին բնակիչներին հնարավորություն է տալիս զարգացնելու իրենց բիզնեսը.
- 2013թ երկրորդ կիսամյակում համայնքի խաղահրապարակում տեղադրվել է հինգ տարբեր տեսակի մանկական խաղեր՝ 660000դրամ արժողության, մշակույթի տան բակում տեղադրելու համար գնվել է 330000 դրամ արժողության մանկական խաղեր, Մասիսի փողոցում, մոտ 200 քառակուսի մետր տարածություն հարթեցվել է՝ երկրորդ խաղահրապակը կառուցելու համար.
- 2013թ երկրորդ կիսամյակում գնվել և տեղադրվել է համայնքի մշակույթի տան համար 803000 դրամ, մանկապարտեզի համար 976000դրամ արժողությամբ շերտավարագույրներ.
- Թերթերի բաժանորդագրման համար վճարվել է 50000դրամ գումար.
- Գյուղապետարանը մանկապարտեզի ավագ խմբի սաներին դպրոց հաճախելու առիթով գնել է 88000դրամ արժողությամբ նվերներ, Ամանորի նվերների և տոնական լույսերի գնման համար ծախսվել է 200000դրամ գումար.
- Համայնքի գրադարանի համար գնվել է 30000դրամ արժողությամբ գրքեր.
- Գյուղապետարանը Մերձավանի մանկապարտեզի աշխատողների համար գնվել է 30000դրամ արժողությամբ ,,Ամանորի և Սուրբ ծննդյան,,տոների ներկայացումների տոմսեր.
- Տիկնիկային թատրոնների և համերգների կազմակերպումը հովանավորել է համայնքի ղեկավարը.
- Քաղաքացիների , ինչպես նաև «Երկրագործության և բույսերի պահպանման» գիտական կենտրոն ՊՈԱԿ աշխատակիցների, դիմումների հիման վրա դարձյալ կատարվել է համայնքի բնակիչների և այգեգործական ընկերության անդամների հողակտորների չափագրման և սահմանների ճշտման աշխատանքներ.
- Համայնքում 2013թ երկրորդ կիսամյակում աղբահանման աշխատանքները կազմակերպելու համար փոխանցվել է 600000դրամ, այն կատարվում է շաբաթական երեք անգամ.
- Հաճախակի փոխվում է գիշերային լուսավորության վառված լամպերը, ծախսվել է 100.0 հազար դրամ.
- Համայնքի կոյուղին շատ հին է և հաճախակի նորոգման կարիք է ունենում՝ 2013 թվականի երկրորդ կիսամյակում շուրջ 160 գծամետր կոյուղու ջրագիծ է մաքրվել՝ ծախսվել է 160000 դրամ.
- Գյուղապետարանը, ժամանակին կազմել և ներկայացրել է բոլոր հաշվետվությունները ըստ պատկանելիության .
- Գյուղապետարանը մշտապես աջակցում է բնակչության էլեկտրամատակարարման, խմելու ջրի սպասարկման, ոռոգման ջրի մատակարարման, գազամատակարարման, կոյուղու սպասարկման ծառայություններ իրականացնող աշխատակիցներին.

2013թ-ին համայնքի հիմնախնդիրներն են.

1. Գյուղապետարանի շենքի տանիքի վերանորոգում.
2. Դպրոցի վերանորոգում.
3. Ոռոգման համակարգի որոշակի հատվածի վերակառուցում.
4. Փողոցների մասնակի ասֆալտապատում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ